

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«___»___20___թ.

Կարգապահական գործ № _____

Ես՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետև՝ Պալատ) կարգապահական գործ նախապատրաստող անձ՝ _____ս,

Պալատի նախագահի «___»_____20___թ. թիվ _____ որոշման հիման վրա փաստաբան _____-ի նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի /«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի _____ խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթի գործը նախապատրաստելիս,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

* Նշվում է դիմողի անունը ազգանունը (անվանումը), դիմումի ամսաթիվը և դիմումում նշված համառոտ փաստաբանին վերաբերող փաստերը (կամ ԶԼՄ հրապարակումը):

2. Դիմողի համառոտ բացատրությունները.

* Նշվում է դիմողի համառոտ բացատրությունները և բացատրությունները վերցնելու ամսաթիվը:

3. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

* Նշվում է պատասխանողի համառոտ բացատրությունները և բացատրությունները վերցնելու ամսաթիվը:

4. Գրավոր փաստաթղթեր.

* Նշվում է յուրաքանչյուր գրավոր փաստաթղթի ամսաթիվը, տեսակը, կազմողի անունը/անվանումը և համառոտ բովանդակությունը:

5. Վկաների ցուցմունքներ.

* Առկայության դեպքում նշվում է վկայի անունը, ազգանունը, ցուցմունքի համառոտ բովանդակությունը: Բացակայության դեպքում, նշվում է, որ վկաներ չեն ներգրավվել:

6. Իրեղեն և այլ ապացույցներ.

* Առկայության դեպքում նկարագրվում է ապացույցը: Բացակայության դեպքում նշվում է, որ այլ ապացույցներ առկա չեն:

7. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը և դրանք հաստատող ապացույցները.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի 19.10.2019թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի (այսուհետ՝ **Վարույթի կարգ**) 3.2.1 ենթակետի կանոնի համաձայն, ապացուցման ենթակա փաստեր են համարվում, ստորև վկայակոչված փաստերը:

* հերթականությամբ նշվում են՝

- կարգապահական գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը,
- թե, որ կողմը պետք է ապացուցի նշված փաստը,
- վկայակոչված փաստը հաստատված է, թե՛ ոչ, եթե հաստատված է, ապա որ

ապացույցի հիման վրա:

Այն փաստերը, որոնք էական չեն համարվելու գործի համար, նշվում են դրանք չընդունելու պատճառները:

8. Այն ապացույցները, որոնք չեն ընդունվել.

** նշվում են այն ապացույցները, որոնք չեն ընդունվել (ճանաչվել են ոչ վերաբերելի կամ անթույլատրելի):*

9. Եզրափակիչ մաս.

Հիմք ընդունելով Վարույթի կարգի 3.10 կետը, ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում, հաստատված համարելով սույն եզրակացության 7-րդ կետում նշված փաստերը, սույն եզրակացությունը ներկայացվում է Պալատի խորհրդին:

Փաստաբանի վարքագծի խախտման վերաբերյալ վերջնական որոշումը կայացնելու է Պալատի խորհուրդը:

Հ.Գ. Սույն եզրակացությունը կազմված է _____ օրինակից, որոնցից առաջին օրինակը հանձնվում է Պալատի խորհրդին, մյուս օրինակները՝ կողմերին:

Տեղեկացնում եմ, որ սույն եզրակացությունը ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում պատասխանողը պարտավոր է Պալատի խորհրդին (ք.Երևան, Զաքյան 7-2) ներկայացնել գրավոր առարկություններ, եթե ամբողջովին կամ մասամբ համաձայն չէ Նախապատրաստողի եզրակացության հետ: Առարկությունների մեջ Պատասխանողը պարտավոր է նշել իր փաստարկները Նախապատրաստողի եզրակացության մեջ տեղ գտած փաստերի և ապացույցների գնահատականի վերաբերյալ: Հիշյալ ժամկետում գրավոր առարկություններ չներկայացնելը Պալատի խորհուրդը կարող է որակել, որպես Պատասխանողի կողմից Նախապատրաստողի եզրակացության (փաստերի) ընդունում:

ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական
գործը նախապատրաստող անձ՝ _____

Նախապատրաստող անձի հասցեն/հեռախոսահամարը՝

